

վիշեալ Դիւանարանի S 3801 ձեռագրով, որ Կեղեաստինեանց Միաբանութեան ունեցած ինչքերուն մէկ հին ցուցակն է: Այս ցուցակին մէջ արձանագրուած կը գտնենք, թղ. 125 թ. «Վաւերական կտակ լատինացեղ բարի թագաւորին Հայոց՝ Լեւոնի Ե Լուսինեան»:

Կտակին պարունակութիւնն է. — Լեւոնի թագման վերաբերեալ կարգադրութիւններ եւ Պարիսի տասներկու եկեղեցիներու ու հիւանդանոցներու օգտին փոքրիկ նուէրներ, ունեցած հարստութիւնն ալ հաւասարապէս բաժնել աղքատներու, Կեղեաստինեանց կամ այն եկեղեցիին որուն մէջ պիտի թաղուի, իր անհարազատ զաւկին եւ իր պալատական պաշտօնեաներուն:

Ահաւասիկ կտակին հաւատարիմ թարգմանութիւնը, զոր կատարած եմ Փրանսական Ազգ. Դիւանարանի վերոյիշեալ օրինակին վրայէն, անձամբ քննելով ձեռագիրը (1) .

*Պատճեն կտակի բարձրապատիւ եւ հզօր իշխան
Լեւոնի՝ քաղաւորիկ Հայոց*

Յովհաննէս, տանուտէր Ֆովիլի, ասպետ, խորհրդական մեր վեհափառ Թագաւորին, եւ վերակացու Պարիսի դատաւորապետութեան. ամէն անոնց որ այս գրութիւնը պիտի տեսնեն, ողջոյն:

Կը ծանուցանենք, թէ մեր վեհափառ Թագաւորէն Շամլէի մէջ հաստատուած երդուեալ նօտար նիկողոս Ֆէռուի եւ Յոհվաննէս Իւրէի առջեւ անձամբ ներկայանալով յանձնարարեց հետեւեալը .

Ազնուզարմ եւ վսեմապատիւ իշխան Լեւոն, շնորհիւն Աստուծոյ, Թագաւոր Հայոց, մարմնովն ու մտքովն առողջ եւ, — ինչպէս որ ինք կըսէր եւ պայծառ կերպով ալ կը տեսնուէր, — շատ լաւ ու ճշմարիտ իմացականութեան մէջ գտնուած միջոցին, նկատելով որ կարճ են մարդու օրերը, եւ թէ մահն ամենէն ստոյգ բան մըն է, ինչպէս եւ իր ժամն ալ ամենէն անստոյգ բան մըն է, ուստի՝ մինչդեռ իր խելքը գլուխն է, սրտանց փափագեցաւ որ իր հոգիին փրկութեանը հոգ ու դարման տանի եւ Տէր մեր Յիսուսի Քրիստոսի՝ այս անցողական կեան-

(1) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document XXX. Այս կտակին Ֆրանսերէն օրինակն հրատարակած են Լանգլուա եւ ուրիշներ, բայց բոլորն ալ սխալաբան եւ պակասաւոր. օրինակ՝ Լանգլուայի պէս գիտնական անձի մը հրատարակութեան մէջ *չորս տեղ* տղ փախած է, առանց հաւուրի առնելու մոռցուած բազմաթիւ բառերն ու վխացող սխալները . . .